

Հ Ո Պ Վ Ա Մ Ն Ե Ր

Հ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԲԱՅԱԿԱՆ ԱՆԳՆԱԿ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Անդեմ նախադասությունները, որոնք կազմվում են մի բառից կամ բառերի կապակցված շարքից, ունենում են մեկ կենտրոն և դրանով հակադրվում են ենթակա-ստորոգյալ ունեցող երկկենտրոն նախադասություններին: Կենտրոնական բառի ինչ խոսքի մաս լինելով պայմանավորվում են անդեմ նախադասության կառուցվածքային, իմաստային և ոճական-կիրառական առանձնահատկությունները: Այդ բառը սովորաբար լինում է որևէ դոչական, երբեմն էլ ածական, թվական, դերանուն, ձայնարկություն կամ բայ: Հաս աչդմ էլ անդեմ նախադասությունները հայերենում բաժանվում են երկու խմբի՝ բայական և անվանական:

Բայական անսեմ նախադասությունների կենտրոնական բառը, որը մենք անվանում ենք առանցքային բառ, անորոշ չերբայն է՝ նա է սրտահայտում նախադասության հիմնական բովանդակությունը, նբա, որպես կառուցվածքի առանցքի շուրջը համախմբվում են մյուս բառերը: Բնչպես հայանի է. անորոշ ղերբայր չի խոնարհվում, բայի եղանակային ձևերի կազմությանը չի մասնակցում: Դա բացարժեղ է նրա իմաստային առանձնահատկությամբ՝ դործողության անվանում է, ցույց է տալիս բացարձակ անորոշ լիճակ: Սրանով պայմանավորվում են նրա շարահյուսական կիրառությունները: Խոսքի մեջ անորոշ ղերբայր դործածվում է երկու ձևով՝ անկախ և կախյալ²: Երբ նրա գործածությունը պայմանավորվում է նախադասության այլ անդամներով, լրացնում է այս կամ այն անդամին ու դառնում լրացում, ապա հանդես է գալիս կախյալ ձևով: Այդպիսի կիրառությունների ղեպքում անորոշ ղերբայր սովորաբար հոլովվում է. նախադասության մեջ լինում է ենթակա, բաղադրյալ ստորոգյալի մաս (ենթական և ստորոգյալը միմյանցով պայմանավորված շարահյուսական հասկացություններ են) և լրացումներ՝ օրևո հաճելի է, դա լավ

1 Եանասիրական գիտությունների ղոկտոր Վ. Առարելյանը նշում է, որ անգեմ նախադասություններ հազմադեպ կազմում է հարակատար ղերբայր (սե՛ս «Հայերենի շարահյուսություն», հատ. Բ, էջ 41): Նա հիշատակում է «Բրս.ծ» հարակատար ղերբայրով կազմված նախադասություններ: Անր պրոպոսիցիաների րնթացքում գտանք նաև «անիծած» ղերբայրով օրինակներ՝ «Որի-բաղրի Նրն է անիծած» (Սեկոյանի) «Կնկա Նրն էլ անիծած» (Արձակ, 511), որոնք կարծես ղարձել են ղարձվածային հատուկ արտահայտումներ, ուր որոշ ղափով միաղնված է հարակատարի ղերբայրական իմաստը:

2 Տե՛ս Галкина-Федорук. Безличные предложения в современном русском языке, 1958, էջ 207: Պրոֆ. Գ. Անաեր ստատարկում է տարբերակել անորոշ ղերբայրի անկախ, կախյալ և բացարձակ կիրառությունները: Նա անորոշ ղերբայրի բացարձակ կիրառության է համարում այն ղեպերը, երբ ղերբայր իրականում պետք է հոլովել, որովհետե նրա լրացյալի՝ ստորոգյալի իմաստը այլ է թելադրում, բայց չի ոլովվում և ֲղտաղործվում է բաղարձակ՝ ղնյովված ձևով՝ կարող էմ ղալ (փոխ. ղալու), պարտոսա էմ տեսնել (փոխ. տեսնելու) և այլն: Իմ կարծիքով բացարձակ կիրառությունը կախյալի առանձին ղրանորումն է և տարբեր ձև ղղետք է հասարել:

գրել չէ, եկավ գրելու, գրելուց հոգնեց, գրելով հարստացավ, գրելում (գրելու մեջ) հաճույք է գտնում և այլն:

Իսկ երբ անորոշ դերբայի դործածությունը չի պայմանավորվում նախադասության այլ անդամներով, մենակ կամ յրացումներով կազմում է ինքնուրույն նախադասություններ, դառնում է կառուցքի կենտրոնական բառը, ապա հանդես է գալիս անկախ ձևով: Անորոշ դերբայի անկախ կիրառությունը այն է, երբ նա կազմում է անդեմ նախադասություն:

Անկախ դործածության դեպքում անորոշ դերբայը մնում է անփոփոխ և նույնխոսի հսդ չի ստանում:

Ի՞նչն է պատճառը, որ միայն անորոշ դերբայն է կազմում անդեմ նախադասություններ: Ինչպես ասացինք, դա այս դերբայի իմաստով պայմանավորված կիրառությունն է: «Անորոշ դերբայով, — գրում է պրոֆ. Ա. Արրահամյանը, — անվանվում է յուրաքանչյուր բայ՝ անկախ դործողությունը կատարողից, եղելություն, դրություն առարկայից, այսինքն ենթակայից»³: Իսկ քանի որ մյուս դերբայները այս իմաստը չունեն, բացարձակ անորոշ ու անկախ վիճակ ցույց չեն տալիս, խոսքում ինքնուրույնաբար հանդես գալ և առանձին նախադասություն կազմել չեն կարող:

Բայական անդեմ նախադասությունները կառուցվածքային որոշ ընդհանրություն ունեն բայական անենթակա նախադասությունների հետ, քանի որ երկուսն էլ կազմված են մի կենտրոնից՝ բայից, բայց այսքանով էլ նրանց ընդհանրությունը վերջանում է: Ճիշտ է, անենթակա նախադասություններում ենթակա արտահայտված չէ, դործողությունը որևէ հայտնի դեմքի չի վերագրվում, բայց համենայն դեպս այդ անորոշությունը սահման ունի, ի վերջո կապված է ինչ-որ դեմքի հետ, որովհետև այն դիմավոր բայ է, և միակազմությունը րաստորեն հարաբերական է. կա մի անհայտ ենթակա: Իսկ բայական անդեմ նախադասություններում և՛ անորոշությունն է բացարձակ, և՛ միակազմությունը⁴:

Անդեմ նախադասությունների ուսումնասիրությամբ զբաղված լեզվաբան-բերականները մոտ տարակարծություններ կան բայական նախադասություններում ստորոգյալի դոյություն հարցի շուրջ: Ոմանք գտնում են, որ անորոշ դերբայը պետք է համարել ստորոգյալ⁵:

Մեր կարծիքով, բայական անդեմ նախադասություններում անորոշ դերբայը չպետք է համարել ստորոգյալ⁶ հետևյալ պատճառներով:

Նախ՝ ենթական և ստորոգյալը որպես նախադասություն կազմող երկու բևեռներ հակադրամիասնություն են⁷, մեկի դոյությունը առանց մյուսի անհնար է⁸: Հայտնի է, որ բայական անդեմ նախադասությունները չունեն ենթա-

³ Ա. Արրահամյան, *Բայը մասնակալից հայերենում*, հատ. 1, 1962, էջ 364:

⁴ Г. В. Колшанский, *Логика и структура языка*, М., 1965, էջ 179:

⁵ S.L. A. Шахматов, *Синтаксис русского языка*, М., 1911, էջ 62: Վ. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն*, հատ. Բ, 1964, էջ 38:

⁶ Այդ կարծիքին է նաև Ս. Արրահամյանը, տե՛ս «Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր», Երևան, 1962, էջ 20:

⁷ Փ. Սեպուհյան, *Շարահյուսության մի քանի հարցեր մարքո-վենիցյան իմացարանության յուրի տակ* (Լեզվի ինստիտուտի ախտությունների ժողովածու, հատոր 4, 1949, էջ 14): Է. Աղայան, *Լեզվաբանության ներածություն*, 1963, էջ 86:

⁸ Խոսքը անենթակա և զեղչված ենթակայով կամ ստորոգյալով նախադասությունների մասին չէ:

և, քանի որ անորոշ դերբայը ցույց է տալիս դործողության, եղելության առարկայից անկախ դործողություն:

Այսպե՛ս դիտենք, որ ստորոգյալը ենթակային վերագրվող հատկանիշն է և արտահայտվում է կամ խոնարհված բայով, կամ դերբայներով ու այլ խոսքի մասերով և օժանդակ բայով, որովհետև քերականական վերագրում կարող են կատարել միայն խոնարհված բայը և «է» օժանդակ բայը: Իսկ քանի որ անորոշ դերբայը անգեմ ձև է, հետևաբար՝ դրանով վերագրում չի կարող կատարվել: Ստորոգյալը որպես շարահյուսական կատեգորիա ձևավորվում է ձևաբանական կատեգորիաների հիմքի վրա⁹, բայով արտահայտված ստորոգյալին բնորոշ են եղանակային ձևերին հատուկ քերականական կատեգորիաները: Ուրեմն բայական անգեմ նախադասություններում անորոշ դերբայը ստորոգյալ համարելը ճիշտ չէ:

Հայտնի է, որ ստորոգումը նախադասության կական հատկանիշներից է: Ստորոգումը հատկանիշի վերագրումն է ենթակային, նշում է պրոֆ. Գ. Սևակը, իսկ պրոֆ. Է. Աղայանը ավելացնում է ժամանակի և տարածության մեջ արտահայտությունը: Այդ իմաստով անգեմ նախադասություններում ստորոգում գոյություն չունի: Ինչպե՛ս կարող է նախադասություն չինել առանց ստորոգման: Բանը նրանումն է, որ ստորոգման այսպիսի բմբռնումը նեղացնում է այդ հասկացության շրջանակները:

Ա. Մ. Պեշկովսկին այդ կերպ է մոտենում ստորոգմանը՝ նա գրում է. «Ստորոգման կատեգորիայի տակ մենք մտցնում ենք. 1) բուն բայերը, 2) բայ հանգույցի միացությունը այլ բառերի հետ, 3) մի քանի անձև բառեր, բայի հետ իմաստով կապված (есть, нет, на), 4) գոյականի ուղղական հոլովը՝ զուգորդված համապատասխան հնչերանգի հետ, 5) անորոշ դերբայը՝ զուգորդված համապատասխան հնչերանգի հետ»¹⁰: Ինչպես տեսնում ենք, Պեշկովսկին ստորոգումը չի նույնացնում ստորոգյալի հետ և դիտում է որպես ավելի լայն հասկացություն, որը, հհարկե, ճիշտ է: Այս իմաստով ստորոգում ունեն բոլոր տեսակի նախադասությունները:

Բայց մենք գերադասում ենք ստորոգումը բնգունել նեղ իմաստով՝ հատկանիշի վերագրում ենթակային և նրանից սարբերակել ստորոգելիությունը¹¹, որպես հաղորդված բովանդակության վերագրում իրականությանը: Աստորոգումը կլինի ստորոգելիության դրսևորման ձևերից մեկը, գոյություն ունենալով միայն այն նախադասություններում, ուր կա ստորոգյալ:

Իսկ անգեմ նախադասություններում ստորոգելիությունը բառական-քերականական արտահայտություն չունի, նրա արտահայտման միջոցը յուրահատուկ հնչերանգն է (ինտոնացիա), որը Ա. Մ. Պեշկովսկին նշում է ստորոգման արտահայտման 4-րդ և 5-րդ ձևերում:

Ուրեմն, անգեմ նախադասությունները չունեն ստորոգում-ստորոգյալ, այլ ունեն ստորոգելիություն, որը հաղորդված բովանդակությունը վերագրում է իրականությանը և արտահայտվում է յուրահատուկ հնչերանգի միջոցով:

Ասացինք, որ բայական անգեմ նախադասություններում անորոշ դերբայով արտահայտված դործողությունը ստորոգյալ չէ, և որե՛նչ պե՛տք է չի վերադրվում:

⁹ Այդ մասին տե՛ս Հ. Բարսեղյան, Արգի հայերենի բայի և խոնարհման տեսություն, 1952, էջ 36 և 11. Արբաբաջյանի նշված աշխատությունը, էջ 20:

¹⁰ Ա. Մ. Пешковский, Русский синтаксис в научном освещении, М., 1938, էջ 181:

¹¹ Այդպես է վարվում Վ. Պանֆիլովը, Տե՛ս նրա Грамматика и логика, 1963, էջ 45:

Սակայն սա չի նշանակում, թե անհատական անհատ է. թե ով է կատարելու գործողությունը: Այդ գործողությունը իր արտահայտման ձևով կարող է վերաբերվել բոլորին, առանց սահմանափակության, սակայն իրագրությունից ու խոսքային միջավայրից հաճախ հնարավոր է եղրակացնել, թե ով է կատարել կամ կատարելու է անորոշ դերբայի ցույց սոված գործողությունը:

Դիմավոր և անդեմ բայական նախադասությունների կառուցվածքային ամենակարևոր տարրերությունը, ուրևմն, այն է, որ վերջիններս միակենտրոն են, շունեն ենթակա և ստորագյայ:

Եթե բայական անդեմ նախադասությունները ենթակա շունեն, ապա նախադասության մեջ շեն լինի ենթակայի լրացումներ¹²: Եվ երբ կաղմում ենք նրանց սխեման, դիմավորների նման կունենանք ոչ թե երկու մաս, երկու սյուն, այլ մի մաս, մի սյուն՝ իր բաղմամբիվ ճյուղավորումներով, այդ թվում և ղոյականական լրացումներով, որոնք անղայման կլինեն լրացման լրացումներ:

Անորոշ դերբայով բայական անդեմ նախադասությունները կարող են լինել միանղամ և բաղմանղամ, այլ խոսքով՝ համառոտ և ընղարձակ: Համառոտ նախադասությունները կաղմված են միայն առանցքային բաղից՝ անորոշ դերբայից, իսկ ընղարձակ նախադասություններում այդ բաղր ունենում է լրացումներ:

Համառոտ բայական անդեմ նախադասություններ ավելի քիչ են հանղիպում. նրանց կիրառությունը սահմանափակված է հիմնականում հրամայական նախադասություններով, մասամբ էլ հարցական, երբեմն ղործածվում են նաև բացականչական բնույթի նախադասություններ, որոնց մեծ մասը հանղես է ղայիս որպես բարղ նախադասության բաղղղրիչ: Օրինակներ՝ «Հաղնիվ՛» — նույն բարղիղյամբ հնչեց միենույն ձայնը» (ԲՀՍԶ, 10), «Լոն՛ — ասում է մայրը» (ն. տ., 151), «Ակսն՛լ» (ՄՄՆ, 148), «Շարունակել» (ն. տ., 149), «Խանղարն՛լ: Ինչի՞ համար» (ՊՍ, 199). Առուղաղբն՛լ, հաստատել ղրպարությունը... (Մ. Երակ., 2, 1965 թ.), «Առուղնա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ...» (ՎՏ, 1, 66): «Փոռել: Պայրեցնել: Շինանյութ կուտակել: Ահա աղխատանքը» (ԳՄԼԶ, 110): «Այո, ոչնչացնել, — վճոնց Վասակը» (ԴԴՎ, 654):

Լրացումներ ունեցող բայական անդեմ ընղարձակ նախադասությունները ավելի շատ են տարածված և ղործածական:

Առաղին հերթին, իհարկե, ինչպես նշեցինք, խոսքը բայական լրացումների՝ խնղիրների ու պարաղաները մասին է, որոնք կարող են ունենալ բային շվերաբերող, ղոյականին հատուկ լրացումներ: Բայական անդեմ նախադասությունների առանցքային բաղր ունենում է բաղմատեակ լրացումներ, ինչպիսիք սովորաբար կարող է ունենալ դիմավոր բայը, որովհետև բայի խնղրաղական, հոյովաղական, լրացումներ ընղունելու հատկությունը շի կաղվում դիմավոր բային հատուկ քերականական կատեղորիանների հետ, այլ սղայմանավորվում է բայիմաստով ու սեղով, որոնք հաղասարաղես բնորոշ են և՛ դիմավոր, ո՛ւ անղեմ ձեերին: Ենղղորձական սեղի բայերը ունենում են ուղղիղ խնղիր լրացումներ՝ «Հիվանղլն պարաղատել վիրահատման» (ԽԱԶԶ, 159), «Իչեցնել ղնղաղիրը» (ԲՀՍԶ, 90): «Մինչև Ե՞րբ հանղուրձել այս աններելի քերուրյունները, մինչև Ե՞րբ շղղաղղուրձել հակայական հնարավորուրյուններն ու ձեղերվ-

¹² Խոսքը ոչ թե ղոյականին հատուկ, այլ քերականական ենթակայի հետ կաղվող լրաղումների մասին է:

ներ» (ՍՀ, 284, 1961 թ.): «Չխախտել օրենքը, սակայն ոչ թե նահանջել, այլ բարօրունիք մատելի ավտոմատափոխներից, կատարված փաստի առաջ կոստյումները ներամանատարությունը» (ԿՄ, 185): «Կարգի՛ր բերել պալատը, պահած տեղերից հանել պալատի թանկարժեք խեղճ ու զարդարեալ թաղամորի հարկարամիներ» (ՍՀ, 7, 65):

Շատ են հանդիպում նաև անուղղակի խնդիր լրացումներ ունեցող առանցքային բառով անդամ նախադասություններ, ընդ որում, անորոշ ղերբայր ունենում է բոլոր տեսակի անուղղակի խնդիրներ: «Պարզևատրել առաջին աստիճանով, — հրաման էր արձակել զենքերայր» (ԿՄ, 187): «Չստանալ այդ մատին, շատանել» (ԲՀՍՀ, 121): «Ուրի՛ն մոտենալ, որի՞ հետ օղովել աստիճան, ս՛րն է բարձրորդ — զրկվել հարստությունից, մեղալ հավատարիմ տեսականին և անզեն, թե...» (Շիրվ., 3, 76): «Վայսերական բանակում ծառայող բոլոր հայ զինվորներին զատել իրենց զորարամիներից և զնդակահարել աչքից հեռու, ծածուկ վայրերում» (Ս. Արվեստ, 4, 1965 թ.): «Բայց միտաններին վերցնել ու զրկել տեսողությունից, բեթհոֆեններին՝ լսողությունից, կոմիտաններին թույլ շտա՛լ սիրել» (ՊՍ, 160) և այլն:

Պարագանների օրինակներ՝ «Մտնել սուրբ տանալն այս ու պղծել արձաններ...» (Էմին, 228): «Ինձ վթարի վայր... թե՛ տուն մերադառնալ, մեջքի վրա պառնել բախտին ու Ոսկանյանի հման Տիգրան Մեծի պատմությունը տարվել» (Սեթ, 495): «Մեկնող մանկան մոտ դուր հեկեկալ, բաց շրթնք առաջ ողջ կյանքը օրոնել...» (ՎՏ, 1, 186): «Առավոտը վաղ կոշիկներ սրբել, թեյ պատրաստել, զնալ հացի հեքի, զնալ գլուղկոտալ պանրի, յուղի, մեղրի, շուկա՛ մրբերի» (Սրձակ, 53) և այլն:

Ավելի շատ գործածական հարցական ընույթի նախադասություններում սովորաբար անորոշ ղերբայր այս կամ այն լրացմանը փոխարինում է համապատասխան հարցական ղերանունը. օրինակներ՝ «Սիլ իսկապես, ինչո՞ւ վաղբով շքնալ...» (ԲՀՍՀ, 189): «Իսկ ինչպե՞ս զնալ» (ն. տ., 191): Որտե՞ղ զտնել զրանց» (ն. տ., 197): «Ի՞նչ ասել նրանց, ինչո՞ւ հանդատացնել նրանց...» (ԲՍ, 294): «Նվ ինչո՞ւ թաքցնել, ումի՞ց...» (Սեկ., 44):

Ինչպես ասացինք, անորոշ ղերբայր ունենում է նույն լրացումները, ինչ այդ բայի եղանակային ձևերը: Որոշ ասորերություններ նկատվում են շարադասության մեջ: Բայական անդամ նախադասությունները ունենում են և՛ սովորական, և՛ շրջուն շարադասություն: Նկատելի է որ այն նախադասություններում, որոնք արասհայտում են կոշ, հրաման, պահանջ, սրողում առանցքային բառը սովորաբար գրվում է նախադասության սկզբում: Առաջին հերթին դա բացատրվում է տրամաբանական շեշտով: Այդ նախադասություններում հիմնական ուղղությունը կենտրոնացվում է անորոշ ղերբայր վրա, որով արտահայտված գործողությունը պետք է կատարվի, անկախ որե՛ հանդամանքից: Օրինակներ՝ «Աղբել և աշխատել կոմունիստարար»: «Արձակել կալանավորների կապերն ու լողնել իրենց տները» (ՍՀ, 7, 331): «Ալաբալել նրանի չերմալեկարակայանի և Տաթևի հիգրոէլեկարակայանի կառուցումը: Կառուցել և գործարկել Շամրի հիգրոէլեկարակայանը: Ապալնուլել ոռոգվող հողադործության հետագա զարգացումը» (ՍՄԿԿ լՂ111 համապատմարի ղիրեկտիվներ): «Բնալ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախադասություն հետևյալ կազմով...», «Կազմել ՍՍՀ Միության կառավարություն հետևյալ կազմով...» (ՍՀ, 181, 1966 թ.):

Առանցքային բառ անորոշ դերբայը նախադասության սկզբում չի լինում, երբ տրամաբանական շեշտը ընկնում է լրացումների վրա:

Նախադաս լրացումներով բայական անդամ նախադասությունների ուսումնասիրությունից պարզվում է, որ նշված գործողությունը կատարվելու է, իսկ նախադաս լրացումները ցույց են տալիս այն լրացուցիչ հանգամանքները, խնդիրները, որոնք այդ գործողության կատարման համար ավելի ղեկավարող կարևոր են և անպայման պետք է հաշվի առնվեն: «Առևարի օբյեկտների շինարարության համար լայնորեն օգտագործելու բանկի վարկերը» (Յերթերից) նախադասության մեջ վարկերը օգտագործելու են առհասարակ, բայց ի՞նչ նպատակով, ինչպե՞ս, դա է ավելի կետում շեշտվում և դառնում նախադաս լրացում, իսկ էթե շարադասությունը փոխենք՝ «Բանկի վարկերը լայնորեն օգտագործելու շինարարության համար», ապա կսաանանք, որ շինարարության համար ինչ որ բան օգտագործվելու է, բայց ի՞նչ բանկի վարկերը, որը և մղվում է առաջին պլան:

Արևմտյան դիմավոր նախադասությունների նման բայական անդամ նախադասություններն էլ չունեն կտյուն շարադասություն, չնայած որ նկատելի է առանցքային բառի առաջադաս գործածության դերապատվություն, նախադասությունների որոշ խմբերում¹³: «Կիճակագրական հաշվումները ցույց են տալիս, որ առանցքային բառը առաջադաս է հրաման, որոշում, հանձնարարություն, պարտավորություն արտահայտող նախադասություններում:

Հարցական բնույթի նախադասություններում հարցում արտահայտող բառը ընկնում է առանցքային բառից առաջ, ինչպես դիմավոր նախադասություններում: Օրինակ՝ «Ի՞նչ անել, ինչպե՞ս փրկվել» (ԿՀՎ, 349): «Ինչո՞վ բացատրել մի ժամանակ բոլորովին անտեսված այդ բնակավայրի նման թռիչքը» (ս. տ., 136): «Հիմա ո՞ւր գնալ...» (ԳՄԼԶ, 122): «Ի՞նչ խոսքերով, ինչպե՞ս երգել և ի՞նչ սրտով հիմա սիրել» (ՎՏ, 1, 100): Եթե հարցը վերաբերում է ոչ անմիջապես բային, այլ նրա լրացմանը, ապա բայի և հարցական բառի միջև ընկնում է բայի լրացումը: «Ո՞ր ծառից սկսել և որ հանապահումով մտնել շուկա...» (Բակ., 311):

Կան այնպիսի նախադասություններ էլ, որոնց մեջ հարցը վերաբերում է անմիջապես բային, և ոչ լրացմանը, այսինքն առանցքային բառը իր վրա հարցում է կրում: Սման ղեկավարում, էթե բայը ունի լրացումներ, սովորաբար ընկնում է լրացումներից առաջ. օրինակներ՝ «Գզնա՞լ. հմուտե՞ս լ նրան...» (Արձակ, 429): «Սոստանա՞լ հայրական կտակը, — ո՞չ, մոր վշտերը, ո՞չ. եղբայրական պարտակասությունները, ո՞չ. գտնականներին — մանավանդ ո՞չ...» (Գիրվ., 3, 366): «... Հրաժարվե՞լ զրբից, թե՞ բարձր կանգնել շրջապատից, պաշտպանե՞լ համոզումները, թե՞ դո՛հ բերել գրանք...» (ԶԱԴ, 92): «Խոզե՞լ նրան և այնպես ոտքով շարունակել ճանապարհը» (ԻՍ, 14):

Բայական անդամ նախադասությունները բնույթով կազմության լինում են նաև բարդ և ունեն իրենց կառուցվածքային յուրահատկությունները: Երբեք, որ ամ-

¹³ Դիմավոր նախադասություններում, ընդհանրապես, բայ-ստորոգյալը սովորական շարադասությամբ պետք է գրվի նախադասության վերջում: Տե՛ս Մ. Արևիցյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 533: Բայի վերջապես գործածության հանդիպում են նաև անդամ նախադասություններում, սակայն բիշ ղեկավարում: «Աղոթի համար ղիտարկները ուսել» (ՄՄՆ, 159): «Ինչո՞ւ անպատճառ կուրացնել, ինչո՞ւ երկու մարդու, յուր նարազատների արևը հավիտյան կավարելնել» (Մուր., 3, 135):

բողոքովյամբ բայական անդեմ բարդ ստորադասական նախադասություն շու-
նենք: Անդեմ լինում է սովորաբար գլխավոր նախադասությունը¹⁴, իսկ երկրոր-
դական դիմավոր նախադասությունը ունենում է տարբեր բնույթներ, փոխարի-
նում է և լրացնում բայական անդեմ գլխավոր նախադասության տարբեր ան-
դամներին. «Ինչպե՞ս շկտրել այն կոկորդը շար, որ ցավից հանկարծ կարող է
ձշալ...» (ՊՆ, 194): «Ինչո՞ւ ելմաբուրյունը բախցնել, քանի որ ինքներդ էլ
դգում եք» (Շիրվ., 3, 373): «Ինչո՞ւ երես տալ մեկին այնքան, որ նա ինչեր երե-
վակալի» (Ն. տ., 387): «Ինչո՞ւ կիրառել մեր բոլոր բջիջներում և ցելսբջիջնե-
րում Մոսկվայի բուշելիկյան փոքոր, երբ կուակցական ամեն մի առանձին ըն-
կեր հանդես չը դալիս հաշվետվությամբ...» (Խանչ., 279): Ասե՛լ, որ ոեկլամը
մեծ նշանակություն ունի» (Ս. Արվեստ, 6, 1965): «... Ու գերեզմանում սև հո-
ղերի տակ զգալ, որ անցար և բեզ շկանչել...» (ՎՏ, 1, 75):

Փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բարդ ստորադասական
նախադասության կազմի մեջ մտնող գլխավոր բայական անդեմ նախադասու-
թյունները մեծ մասամբ հարցական բնույթի են լինում, երկրորդականները
ընդհանրապես պատմողական են և դիմավոր: Սա կարելի է բացատրել հետև-
յալով. քանի որ երկրորդական նախադասությունը լրացնում է գլխավորին,
պարզաբանում է այս կամ այն անդամին, փոխարինելով նրա լրացմանը, ադա
վերադարձում ավելի որոշակի պիտի լինի, պետք է ցույց տա որոշակի ենթակա-
յի վերագրվող հատկանիշ: Այդ ենթական հաստիս գլխավոր անդեմ նախադա-
սության մեջ կատարում է այս կամ այն լրացման պաշտոն, հիշատակված է
երկրորդականը ունենում է և՛ ենթակա, և՛ ստորոգյալ: Բերված օրինակներից,
ասենք «...Ինչպե՞ս շկտրել այն կոկորդը շար, որ ցավից հանկարծ կարող է
ձշալ» և «Ինչո՞ւ երես տալ մեկին այնքան, որ նա ինչեր երևակալի» նախադա-
սությունների մեջ «կոկորդը» և «մեկին» գլխավոր նախադասության մեջ հիշա-
տակված լրացումները երկրորդականի մեջ կատարում են ենթակայի պաշտոն՝
դերանվամբ փոխարինվելով:

Ավելի շատ դործածական են համադասական բայական անդեմ բարդ նա-
խադասությունները: Բարդ նախադասության բաղադրիչները այստեղ արդեն
տարբեր տեսակի են, տարբեր կառուցվածք ունեն, կարող են լինել և՛ համա-
ոտ, և՛ ընդարձակ, որոշ շափով հիշեցնելով միավորյալ նախադասությունները:
Սախ այն համադասական նախադասությունների մասին, որոնք կազմված են
մեկից ավելի բայական անդեմ նախադասություններից: Այդ նախադասությունը
կազմող բաղադրիչները միմյանց կարող են միանսլ շաղկապով և առանց շաղ-
կապի, շարահարությամբ: Առանց շաղկապի կապվելու դեպքում նախադասու-
թյունները ունենում են թվտրկման ինտոնացիա՝

«Ելնել ճանապարհ, խնդուն հեռանալ,

Զվարթ և թեթև թափառել ադատ.

Ծվ ո՞չ հայրենիք, ո՞չ տուն ունենալ,

Ո՞չ անուն, ո՞չ դենք, ո՞չ փառք, ո՞չ արծաթ...» (ՎՏ, 1, 186):

¹⁴ Միայն մի օրինակ ունենք մեր ձեռքի տակ, որ և՛ գլխավոր, և՛ երկրորդական նախադա-
սությունները անդեմ են. «Իսկ ինչպե՞ս անել, որ երկուսն էլ ունենալ» («Ուղեգրական Հայաս-
տան» օրաթերթ): Այսպիսի կառուցվածք շատ հազվագյուտ է հանդիպում և հայերենին բնորոշ չէ:

«Հասնել շինարարության էժանացման, գործող կարողությունների արժերի համեմատությամբ իջեցնել նոր զործարկվող կարողության մեկ միավորի արժեքը, շինարարության ժամկետները կրճատել...» (ԱՀ, 82, 1966):

Բարդ համադասական նախադասություն կազմող բայական անդամ նախադասությունները կարող են միանալ նաև շաղկապով: Գործածական են «և», «ու» շաղկապները, բնչպես նաև «թե»-ն հարցական նախադասություններում: Մյուս համադասական շաղկապների կիրառությունը այս դեպքում սահմանափակ է. «Մոտի հավեբժության դառնությունն պղալ,— եվ թախժել անհուն և անշար լինել...» (ՎՏ, 1, 186): «Ամուր կազմակերպել շքախորությունը և հենվել նրա վրա... Սահմանափակել և մեկուսացնել կուլակին...» (Խանջ., 101): «... Ու սիրո ևրպեր Հորինել, Չոնել, Երկրային շրնչին հոգսերը թողած, Կամ ոտներն հանգիստ ժայերից կախած, նստել Պառնասի երջանիկ դլխին Ու բարձրից նայել էս հիմաբ խալխին» (Թում., 2, 94): «... Գետո՞վ անցնեյ, թե՞ կամուրջով դնալ» (ՐՄ, 12): Ինչպես ասել ենք, իրադրությունից, խոսքային միջավայրից, կարող ենք իմանալ, թե անորոշ դերբայով տրտահայտված գործողությունը ու՞մ է վերաբերվում, ով պետք է կատարի: Նկատելի է. որ համադասական նախադասության տարբեր բաղադրիչների տարբեր գործողությունները կատարելու է իրադրությունից հասկացվող ու բռնական քերականական արտահայտություն շատացած նույն անձը¹⁵: Օրինակները շատ են, բավարարվենք երկու-երեքով. «Ինչպե՞ս Բանդիլակ նրան, ինչպե՞ս Եայլ նրա երեսին...» (ՐՄ, 485): «Ինչո՞ւ, ուրեմն, միայն այս հաղթությամբ բավականանալ և ավելի հեռու շգնալ...» (ն. տ., 136): «Ավարտել Կուստանայի արհեստական մետաքսաթելի գործարանի կառուցումը և սկսել ռետինի կոմբինատի կառուցումը» (ՍՀ, 84, 1966):

Պատահում են նաև այնպիսի համադասական նախադասություններ, որոնց կազմի մեջ մտնող նախադասությունները լինում են տարբեր տեսակի՝ մեկը անդամ, մյուսը գիմավոր, մեկը բայական անդամ, մյուսը անվանական անդամ: «Այժմ հաղիվ հեռացել է նրանից... և նորե՛ն վերսկսել նույն տառապանքները» (Շիրվ., 3, 67): «Գուք բոլորը հերքեցիք... բայց դատն ինչպե՛ս պարզել» (ն. տ., 202): «Բայց ի՛նչ սոսկալի դրու՞թյուն. տեսնել սիրելի դավակներին... կապված մի տտելի կնոջ հետ...» (ն. տ., 286): «Մարդը դյուղսովետի նախադահ է եղել, նոմենկլատուրային անձ, և հանկարծ հանապարհի վրա աշխատել...» (Սևթ, 144): «Ի՛նչ երանություն, լավի, բարու համրավաբերը լինել աշխարհում...» (Սեկ., 106): «Ցավից կարծրանան թող նրբանները, Բայց քայլե՛լ, քայլե՛լ...» (ն. տ., 150):

Բայական անդամ նախադասությունները կիրառվում են նաև ուրիշի խոսքի կառուցվածքում որպես ուղղակի խոսք. «Ինչո՞ւ կեղծուրյան Բողր այսքան համառությամբ սեղմելիմ երեսին... — մտածեց ինքն իրան Թաղուհին» (Մուր., 3, 32): «Թաղուհին լոեց և սկսավ մտածել. «Կառարե՛լ արդյո՞վ իշխանի խրնվիրը, ըն՞ոչ» (ն. տ., 235) և այլն, իսկ ավելի շատ տեղափոխ կառուցվածք հանդիպում է հրամայական բնույթի նախադասություններում, ուր հրամանը՝ ուղղակի խոսքը, անդամ է, իսկ հեղինակի խոսքը, որով ցույց է տրվում, թե ով է գիմում, հրամայում, գիմավոր. «Հիվանդին պատրաստել վիրահատման, — կտրողորեց բժիշկը և անմիջապես էլ ուղղեց, — երեխային պատրաստել վիրա-

¹⁵ Անձն ենք ասում, որովհետև բայական անդամ նախադասություններում սովորաբար նրվում են այնպիսի գործողություններ, որոնք կապվում են մարդկանց հետ՝ մեկի կամ խմբի:

հատման» (ՌԱԶԶ, 159): «Հոե՛լ,— ասում է մայրը» (ԲՀՍԶ, 151): «Հագեր-վե՛լ,— նույն բարեկամը հնչեց միևնույն ձայնը» (ն. ա., 10), իսկ երբ խոսում է Լ.ին ղեմրի անձնախորությունը և հրամայում, հեղինակի խոսքը դառնում է հր՛ խոսողի խոսքը, որն էլ ցույց է ապիս, թե ով է հրամայողը. «Չունտե՛նալ,— ասում եմ Լս...» (ԲՀՍԶ, 150): «Հրամայում եմ. Լավի ուրվածման դեպքում տեղից չշարժվե՛լ...» (ԿՄՍ, 176): «Հրամայում եմ. Ախոր... սուլուս սուլ հրեաանային քսան համադարկով» (ՍՀ, 102, 1966 թ.):

Սրանք բառ էություն խառն տեսակի բարդ համադասական նախադասություններ են, որոնց կազմի մեջ մտնող նախադասություններից մեկը դիմավոր է, մյուսը անդեմ:

Բայտկան անդեմ նախադասությունների տանցքային բառը կարող է ունենալ բազմակի լրացումներ: Առաջին հայացքից թվում է, թե մի անգամ ասված բայը մյուս լրացումների մոտ ղեղձված է: Սակայն իրականում այդպես չէ: Ինչպես դիմավոր նախադասությունների բայ-ստորոգյալը ունենում է բազմակի լրացումներ, և յուրաքանչյուր լրացման մոտ լրացյալը չի կրկնվում, այնպես էլ անդեմ նախադասություններում: Համեմատենք. «Գիմել կեղծիքի, խարերություն...» (Շիրվ., 3, 302) և «Գիմելու եմ կեղծիքի, խարերություն»։ «Ջարգացնել կաթնա-մսատու անասնապահությունը, բեկոնային խոզաբուծությունը և թռչնաբուծությունը» (ՍՀ, 84, 1966) և «Ջարգացնենք կաթնա-մսատու անասնապահությունը, բեկոնային խոզաբուծությունը և թռչնաբուծությունը»:

Իսկ երբ անորոշ դերբայն ունի շափի պարագա և ուղիղ խնդիր լրացումներ, գործողությունը կապվում է տարբեր խնդիրների հետ ու տարբեր են (թվական տեսակետից) շափի պարագաները, և յուրաքանչյուր ուղիղ խնդրի հետ սպասվում էր բայի գործածություն, հետո շափի պարագա, բայց բայը չկա, և պարագան արոհվում է խնդրից ու անջատվում է բուժով. սրինակ. «Սինթետիկ կաուչուկի արտադրությունն ավելացնել 2,2 անգամ, սինթետիկ ճարպամթերների արտադրությունը՝ առնվազն 3 անգամ, սինթետիկ լվացման միջոցներինը՝ գրեթե 6 անգամ» (ՍՀ, 84, 1966): «Արդյունաբերական արտադրանքի արտադրության ծավալն ավելացնել մոտավորապես 1,8 անգամ, էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 2,3 անգամ, հանրային պարարտանյութերի արտադրությունը՝ 3,7 անգամ» (ն. ա.):

Անդեմ նախադասություններում առանցքային բառը երբեմն կրկնվում է, կրկնվում է հաճախ տարբեր լրացումների հետ և ավելի շեշտում այդ գործողության կարևորությունը, ավելի արտահայտչական է դարձնում խոսքը. «Այո՛, հեռանա՛լ, հեռանա՛լ,— կրկնեց Պասյը» (ՍԶ, 7, 564): «Նստել այստեղ, անվերջ նստել ու նայել Աշնամուտին» (ՎՏ, 2, 106): «Կրակե՛լ, կրակե՛լ նախրի վրոտ,— հնչեց... ձայնը» (Հ. Քոչար, Մեծ տան դառնակները, 1, 273):

«Երթա՛լ, երթա՛լ, երթա՛լ առանց ճրագի.

Երթա՛լ՝ առանց սուղի, լացի, փափաքի.

Երթա՛լ՝ առանց սովի, առանց պապակի...» (Ռ. Սեան):

Հաճախ էլ տարբեր բայեր ունենում են նույն լրացումը, որը երբեմն կրկնվում է ոճական նկատառումներով՝ «Ինչո՞ւ տխրել, ինչո՞ւ լուել...» (Էմին, 93): «Մնա՛լ վտղոցում. ծերանա՛լ վտղոցում և մեռնել վտղոցում» (ՎՊ, 248): «Օ՛, ո՛ր մեկը պատմել, ո՛ր մեկը հիշել...» (Սուր., 3, 70):

Իրմտվոր նախադասությունների նման անդամ նախադասություններում, երբ ժխտվում է բույրի ցույց տված գործողությունը, սկզբից ավելանում է «չ» ժխտական մասնիկը, որը տարբեր բնույթի նախադասություններում ունենում է ուսական ու իմաստային տարբեր արժեք: Այսպես, «չ» ժխտական մասնիկն ունեցող անորոշ դերբայով այն հարցական նախադասությունները, որոնք ունեն հարցական դերանուն (մեծ մասամբ «ինչո՞ւ»), որով արտահայտվում է հարցում, ունենում են ոչ թե ժխտական, այլ հաստատական երանդ¹⁶: (Այս երևույթը նկատելի է նաև դիմավոր նախադասություններում): Օրինակներ՝ «Ինչո՞ւ ուրեմն չկամենալ, որ այդ մահը հանդիպի նրան... Ինչո՞ւ չմխիթարվել այն բաղցր մտքով...» (Մուր., 3, 330), «Ինչո՞ւ չօղակ նրանց...» (ն. տ., 257), «Ինչո՞ւ չջարգել հանցավոր ծունկը...» (ՊՍ, 194): Եվ ընդհակառակն, ժխտական մասնիկ չունեցող հաստատական կառուցվածքի որոշ նախադասություններ էլ (նորից մեծ մասամբ «ինչո՞ւ» դերանվամբ) ունենում են ժխտական երանդ, բացասում, ժխտում են այդ գործողության կատարումը. օրինակ. «Գրանից հետո ինչո՞ւ վարձանալ կամ հիանալ այդ սիրո մաքրության վրա» (ԶԱԳ, 174): «Ինչո՞ւ պիտակցաբար կեղծել... Ինչո՞ւ ուրեմն խայծեր սարքել, խաղեր ըստեղծել» (Վ. Փափաղյան):

Վերոհիշյալ նախադասություններում (և՛ ժխտական մասնիկ ունեցող, և՛ չունեցող) հարցը նարտասունական է. նախադասության ձևը կարծես նշանակություն չունի, ժխտականները հաստատական միտք են արտահայտում, հաստատականները՝ ժխտական:

Նշենք, որ ընդհանրապես սլատմողական բայական անդամ նախադասություններ հողվադյուտ են պատահում: Իս պատմողական նախադասությունների կառուցվածքային ու իմաստային առանձնահատկությամբ պայմանավորված երևույթ է: «Բայոր սլատմողական նախադասությունները պարունակում են հաստատում կամ ժխտում: Հետևաբար, բոլոր սլատմողական նախադասությունները անմիջականորեն արտահայտում են դատողություն»¹⁷, իսկ դատողությունը, հնչպես հայտնի է. կազմված պետք է լինի երկու տարրերից՝ սուբյեկտից և սլոբեկիատից, որոնք նախադասության մեջ ունենում են իրենց բառական արահայտությունը: Քանի որ բայական անդամ նախադասությունները չունեն ենթակա և ստորոդյալ, ուրեմն նրանք դատողություններ չեն, նրանցով որևէ բան չի հաստատվում կամ ժխտվում, հետևաբար, նրանք պատմողական լինել չեն կարող: Ահա ինչու բայական անդամ նախադասությունները սովորաբար արտահայտում են հողեկան-դրացումային և կամային դանդան երևույթներ: Ոիշտ է, բայական անդամ նախադասության բովանդակությունն էլ համապատասխան հետևանքով վերադրվում է իրականությանը, սակայն սա բոլորովին այլ վերադրում է և զգալիորեն տարբերվում է անվանական նախադասությունների վերադրումից, ուր ինքնակա առարկան կարող է հաստատվել կամ ժխտվել: Իսկ ոչ ինքնակա հատկանիշ անորոշ դերբայով որևէ գործողության հաստատում կամ ժխտում չի արտահայտվում, հաստատվում կամ ժխտվում է նրանց կատարումը, որը գրանցվում է ցանկություն, հրաման, դարմանք, հիացումներ և այլ կամային, հողեկան երևույթների ձևով:

¹⁶ Այդ մասին տե՛ս Ս. Գ. Արբախյան, Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, 1962, էջ 130:

¹⁷ Գ. Բրուտյան, Տրամաբանություն, Երևան, 1957, էջ 187:

ՀԱՐՈՒԹՅԱՆԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արձան — Սովետա՝այ զրականութիւն, րնաիր Երկեր, Արձակ, 1960:
2. Բակ.— Ա. Բակունց, Երկեր, 1955:
3. ԲՀՍԶ — Բ. Հովսեփյան, Սերմնոցանները չվերադարձան, 1962:
4. ԳՄԸ — Գ. Մահարի, Հոռութեան ձայնը, 1962:
5. ԳԴՎ.— Գ. Գեմիրճյան, Վարդանանք, 1954:
6. ԶԱԴ — Բ. Զարյան, Աղամյան, 1960:
7. ԹՈՒՄ.— Զ. Թումանյան, Երկեր, հատոր 1, 1956:
8. ԽԱՆՋ.— Ա. Խանջյան, Հողվածներ և ճառեր, 1963:
9. ԿՀՎ.— Ստ. Կուրտիկյան, Հայրենի հողի վրա, 1960:
10. ԿԺՄ.— Ստ. Կուրտիկյան, Փամանակներ և մարդիկ, 1962:
11. ՄՄԵ.— Մ. Մանվելյան, Երկեր, 1959:
12. Մուր.— Մուրացան, հատոր 3, 1963:
13. Շերմ.— Շիրվանդադե, հատոր 3, 1959:
14. ՊՍ — Պ. Սեւակ, Անյոնի զանգակատուն, 1959:
15. ԻԱԶԶ — Բ. Արամյան, Զթամրած ձիեր, 1963:
16. ՉԳ — Վ. Պարտիզունի, Գրականութեան ուժն ու հմայրը, 1963:
17. ՎՏ.— Վ. Տերյան, հատոր 1, 1960:
18. Ս. Արվեստ.— Սովետական արվեստ, ամսագիր:
19. Ս. Գրակ.— Սովետական զրականութիւն, ամսագիր:
20. ՍԵԿ.— Սեկոյան, Ոսկե վաղերի մեջ, 1958:
21. ՍԶ.— Ստ. Զորյան, հատոր 7, 1962:
22. ՍԽՔ.— Ս. Խանզադյան, Քաջարան, 1965:
23. ՍՀ — Սովետական Հայաստան, օրաթերթ:
24. ԲՍ.— Բաճճի, Սամվել, 1957:

Г. А. АРУТЮНЯН

СТРУКТУРА ИНФИНИТИВНЫХ БЕЗЛИЧНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ

Резюме

Особенности безличного предложения в основном определяются тем, какой частью речи выражается главный член. Именно поэтому безличные предложения следует разделить на две группы — именные (номинативные) и глагольные (инфинитивные).

Главным членом инфинитивно-безличного предложения является неопределенная форма глагола.

Предложения данного типа не имеют подлежащего, следовательно, и не имеют сказуемого, так как подлежащее и сказуемое выявляются как элементы сопоставления. В них не выражена также сказуемость. Слово или группа слов выражает мысль с помощью предикативности, которая показывает отношение семантики (смысла) предложения к действительности. Формой выражения предикативности является интонация.

Как уже отмечено, глагольные безличные предложения не имеют подлежащего, следовательно, и не могут иметь второстепенных членов к подлежащему. И если мы составим схему предложения такого типа, то получается однолинейная схема с одной или многими частями, так как

встречаются и одночленные, и многочленные предложения («Լևել» և «Այժմ ո՞ւմ մոտ դնալ»):

На основе результатов исследования доказывається, что неопределенная форма глагола в безличных предложениях может иметь те же дополнения, которые свойственны личному глаголу, так как это зависит от семантического и грамматического управления глагола. Некоторое разнообразие наблюдается в порядке членов предложения. Если в личных предложениях, как отмечает проф. М. Аоегян, обычно глагол-сказуемое находится в конце предложения, то в безличных глагольных предложениях глагол занимает первое место, особенно в тех предложениях, которые выражают повеление, приказ, поручения и т. д.